ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«-----» մայիսի 2010թ. N ---Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՍՍՀ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ՇԻՆԱՐԱՐ ՌԱՖԱՅԵԼ ԿԱՆԵՑՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» 1999 թվականի օգոստոսի 31-ի N551 որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին ***որոշում է.***

Տալ համաձայնություն ՀՍՍՀ վաստակավոր շինարար Ռաֆայել Կանեցյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Ամիրյան 12 հասցեում տեղադրելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Քաղաքաշինության,
հողօգտագործման և բնապահպանության,
բազմաբնակարան շենքերի և համատիրությունների
հարցերի մշտական հանձնաժողովի անդամ *Լ. Իգիթյան*

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՍՍՀ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ՇԻՆԱՐԱՐ ՌԱՖԱՅԵԼ ԿԱՆԵՑՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՅՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման համար հիմք է հանդիսանում Ռաֆայել Կանեցյանի նշանակալի ավանդը հանրապետության շինարարության ոլորտում:

Ռաֆայել Կանեցյանի աշխատանքային գործունեության ընթացքում կյանքի են կոչվել Երևան քաղաքի բազմաթիվ բարձրահարկ շենքեր, որոնց շինարարությունը 1969-1978թթ. իրականացրել է նրա գլխավորած «Բարձրահարկշին» տրեստը:

Այդ ցանկից առանձնացվում են, հատկապես, «Երիտասարդական» պալատը, 15-16 թաղամասերի բարձրահարկ բազմաբնակարան բնակելի շենքերը, Ամիրյան փողոցի 12 հարկանի բազմաբնակարան բնակելի շենքի շինարարությունը:

Ռաֆայել Կանեցյանը ՀՍՍՀ պետական մրցանակի դափնեկիր է եղել:

Քաղաքաշինության,
հողօգտագործման և բնապահպանության,
բազմաբնակարան շենքերի և համատիրությունների
հարցերի մշտական հանձնաժողովի անդամ *Լ. Իգիթյան*